



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ԷՆՍԻՆՈՅԻ
Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 21 Դեկտեմբերին, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան յատուկ պատգամը:

Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, Ամերիկայի մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հոգեւոր ծառայութեան 50ամեակին եւ Արեւմտեան Թեմիս 35ամեակին առիթով, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ի յիշատակ երջանկայիշատակ Չարեհ Ա., Խորեն Ա. եւ Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներուն, Ամերիկայի առաջին առաջնորդ լուսահոգի Հրանդ Արք. Խաչատուրեանի, ինչպէս նաեւ մեր եկեղեցւոյ ու Թեմին անսակարկ ծառայութիւն մատուցած եկեղեցական ու աշխարհական նուիրեալներուն հոգիներու խաղաղութեան համար:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT
HOLY MARTYRS CHURCH IN ENCINO**

On Sunday, December 21st, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino and will deliver the sermon.

By the ordinance of the prelate an on the occasion of the 50th anniversary of the North American Prelacy and the 35th anniversary of the Western Prelacy, requiem service will take place in all Prelacy churches for H.H. Catholicos Zareh I, H.H. Catholicos Khoren I, H.H. Catholicos Karekin II, and the first Prelate of North America H.E. Archbishop Hrant Khatchadourian. Requiem will also be offered for the departed servants of our churches and Prelacy.

**ԲԱՐՁՐ. Տ. ՕՇԱԿԱՆ ԱՐՔ. ԶՕԼՈՅԵԱՆ ՊԻՏԻ ԶԱՆԴԻՍԱՊԵՏԷ
ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Հիւսիսային Ամերիկայի Թեմի հաստատման 50րդ եւ Արեւմտեան մեր թեմի 35րդ տարեդարձի տօնակատարութեան մասնակցելու համար, Լոս Անճելըս կը ժամանէ Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեան: Առաջնորդ Սրբազանը ողջոյնի խօսք պիտի արտասանէ հանդիսութեան ընթացքին որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 21 Դեկտեմբերի երեկոյեան ժամը 6-ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ:

Նոյն օրը առաւոտուն, Օշական Սրբազանը պիտի հանդիսապետէ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ մատուցուող Ս. Պատարագին եւ այս առիթով պիտի քարոզէ:

**ARCHBISHOP OSHAGAN CHOLOYAN TO PRESIDE OVER DIVINE
LITURGY AT ST. MARY'S CHURCH IN GLENDALE**

Prelate of the Eastern United States H.E. Archbishop Oshagan Choloyan will be in Los Angeles to participate in the celebration of the 50th anniversary of the North American Prelacy and the 35th anniversary of the Western Prelacy, which will take place on Sunday, December 21st, at 6:00 p.m. at St. Mary's Church in Glendale. The Prelate will deliver his remarks during the event.

Earlier in the day, Archbishop Choloyan will preside over Divine Liturgy at St. Mary's Church and deliver the sermon.

**ԹԵՄԻՍ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԽՄԲԱԿՆԵՐՈՒ
ԱՍԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԽՐԱԽՃԱՆՔ**

Ամանորի եւ Ս. Ծննդեան տօնական օրերու առիթով, Շաբաթ, Դեկտեմբեր 27-ին երեկոյեան ժամը 7:30-ին, մեր եկեղեցիներու երիտասարդական միութիւնները պիտի ունենան տօնական օրերու խրախճանք մը, Զոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցոյ «Կարապետեան» սրահին մէջ:

Ձեռնարկը կազմակերպուած է Զայաստանեայց Առաքելական եկեղեցոյ երիտասարդական միութեանց վարիչ մարմինին կողմէ: Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի աշխատանքներուն ծիրին մէջ տեղի ունեցող այս ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութիւնը:

ACYA NEW YEAR AND CHRISTMAS CELEBRATION

The fourth annual Armenian Church Youth Association New Year and Christmas celebration will take place on Saturday, December 27th, at 7:30 p.m., at "Karapetian" Hall of St. Garabed Church in Hollywood.

The celebration will take place under the auspices of the Prelate and has been organized by the ACYA central board.

The event is open to youth ages 18-35 and tickets can be purchased by calling 818-859-9081.

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՒ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ ՀԵՏ

Երեքշաբթի, 16 Դեկտեմբերի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Ազգային Վարչութեան հրաւերով, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում մը, որ համախմբեց ծխական շրջաններու հոգեւոր հովիւները, հոգաբարձական կազմերն ու Ազգային Երեսփոխանական Ժողովի անդամներ:

Հանդիպումին բացումը կատարելով, Առաջնորդ Սրբազանը յայտնեց, որ այս հանդիպումը մաս կը կազմէ ծխական շրջաններու ներկայացուցիչներուն հետ Ազգ. Վարչութեան հերթական հանդիպումներու շարքին, եւ կը նպատակադրէ հետամուտ ըլլալ Ազգային Երեսփոխանական Ժողովէն բխած որոշումներուն ու թելադրանքներուն իրականացման, ապա նաեւ բաժնեկցիլ անմիջական տեղեկութիւններ, միասնաբար քննարկել հասարակաց հարցեր ու ծրագիրներ:



Նկատի ունենալով, որ մեր Թեմի պատուիրակութիւնը նոր վերադարձած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովէն (2ԷՆ 5 Դեկտեմբեր, Անթիլիասի մէջ), Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ տուին յիշեալ ժողովի ընթացքին քննարկուած հարցերուն ու

առաջադրուած ծրագիրներուն մասին:

Առաջնորդ Սրբազանը նաեւ տեղեկութիւններ փոխանցեց Վատիկան իր այցելութեան մասին. ծանօթ է որ Նոյեմբերի վերջերուն ան Վատիկան մեկնած էր, միանալու համար Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի շքախումբին՝ հանդիպումներ ունենալու Կաթողիկէ եկեղեցւոյ Զահանայապետ Ն.Ս. Պենետիկտոս Ժ2. Պապին ու այլ բարձրաստիճան

պատասխանատուներու հետ: Հանդիպումի երկրորդ բաժինը յատկացուած էր Թեմիս 35ամեակի տօնակատարութեան նախապատրաստական աշխատանքներուն: Առաջնորդ Սրբազանը ներկաներուն տեղեկութիւններ տուաւ Կիրակի, 21 Դեկտեմբերի երեկոյեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ յարկին տակ կազմակերպուած տօնակատարութեան մասին, վեր առնելով մեր ժողովուրդի կեանքին մէջ Ս. Աթոռոյս դերն ու անոր իրականացման մէջ մեր Թեմի առաքելութիւնը:

Հանդիպումը նաեւ առիթ եղաւ խորհրդակցելու ծխական կեանքը աւելի եւս աշխուժացնելու եւ մեր եկեղեցւոյ ծառայութիւնները աւելի մեծ թիւով հաւատացեալներու կեանքին հասցնելու միջոցներուն մասին: Այս գծով, Ազգ. Վարչութեան անդամներէն Տիար Ներսես Մելքոնեան տեղեկութիւններ տուաւ այն աշխատանքներուն մասին, որ վստահուած է եկեղեցիներու անդամական վիճակը բարելաւելու եւ հաւատացալները աշխատանքի կալուածներու մէջ ներգրաւելու միջոցները քննարկող յանձնախումբին:

Աւարտին, Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան անդամներ յաւելեալ լուսաբանութիւններ տուին, պատասխանելով ներկայ ժողովականներու հարցումներուն: Հանդիպումը վերջ գտաւ «Կիլիկիա» խմբերգով:

PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEET WITH DELEGATES AND BOARDS OF TRUSTEES

By invitation of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council, on the evening of Tuesday, December 16th, Clergy, Delegates, and Boards of Trustees gathered at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall for a discussion of issues of concern to all our parishes.

The meeting convened with remarks by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who welcomed the representatives and stated the purpose of the meeting which was to discuss and explore the decisions and suggestions made by the Representatives Assembly and to exchange information and share knowledge.



Given that the Prelate and delegates had recently returned from Antelias where they participated in the General Assembly of the Catholicosate of Cilicia, the Prelate and Executive Council Chairman Dr. Garo Agopian conveyed the outcome of the Assembly and the suggestions put forth.

The Prelate also conveyed the details of his trip to the Vatican where he has joined the delegation of H.H. Catholicos Aram I on an official visit to H.H. Pope Benedict XVI.

The discussion then turned to the 35th anniversary of the Prelacy which will be celebrated on Sunday, December 21st, at St. Mary's Church in Glendale.

The meeting also offered the opportunity for a discussion on reinvigorating our parishes and expanding the range of our mission to reach as many faithful as possible. In this regards, Executive Council member Mr. Nerses Melkonian spoke of the efforts being undertaken by the committee assigned for this specific task.

Following a question and answer session, the meeting came to a close with the singing of "Giligia".
